

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պօլսոյ հմր. 10 Մէճ.
Պաշտօնագ. 2 Լեւո
Վեցամս. Կ. Պօլսոյ 5 Մէճ.
Պաշտօնագ. 1 Լեւո
Օտար երկրներու 50 Ֆր.
Շանուցման տողը մէկ անգամի հա-
մար 3 զուրուշ, երկու անգամի հա-
մար 2 զուշ է. աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կըլ-
այ :
Իրաւանի թիւ 40 միտաւ արծ :



ԼԵՐԱԳԻՐ

ՀԱՆԱՊԱԶՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գնացած լրագրաց ճանրու-
ծախքը խմբագրութեան վրայ է :
Լրագրաց վերաբերեալ նամակ
կամ որ և իցէ գրութիւն խմբագրի
— Տնօրէնին ակտի ուղղութիւն : Պայտ-
թիւս Ստ. Կառույցի թիւ
198, Ն. սի զրասեն :
Ետեւ :
ձա՞յ : սրտած նա-
մակ չը :
Ձա : յողուած, Լեճ
Ետ : չ :

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 17 ՀՈՒՏԵՄԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Հելլենական խնդրոյն վրայ ուր-
բաթ օրը տեղի ունեցած դուստր-
ման առթիւ Օսմանեան պատուի-
րակներուն կարգադրած երկար յիշա-
տակագիրը վեհաժողովին որոշած գը-
ծին անպատեհութիւնները կը ցու-
ցնէ, և հետեւեալը զայն կը մերժէ :
Իսկ Հելլեն պատուիրակները սահմա-
նադիմ մը պահանջած են, զոր Ա-
թէնքէն հեռագիր մը մանրամասնա-
բար կը նշանակէ : Խնդրոյն մէջ Ա-
պանիացիներն երրորդ դեր մը կը խա-
ղան, և կը պատրաստուին մէկ կող-
մէն հելլենաց, միւս կողմէն Գարա-
տաղաց զիմադրել, որք կիւսինեէի
և Բալթիկ դերերը կը պահանջեն :
Չորս հինգ հազար Ապանիացիք այն
տեղերը դուստրուած են Գարատաղ-
ցիները վանելու, և կիւսինեէի Ա-
թի փաշային հրամանատարութեան
ներքեւ տաններկու հազար ուրիշ Ա-
պանիացիք ալ Բերլինէի կողմերը մի-
այած են կիւսինեէի օգնութեան
հասնելու համար : Իսկ Գարատաղ-
ցիք՝ որք վերջին անգամ Բ. Դրան յայ-
տարարութիւն ներկայած էին յիշեալ
տեղերն առնուլ համար, և սպառ-
նացած էին որ եթէ չտրուի՝ բռնի
պիտի մտնեն հոն, իրօք կերպի թէ
այս խնդիրն իբր Գորդեան հանգոյց
արով լուծելու պիտի ձեռնարկեն, և
ամեն պէտք եղած միջոցները ձեռք
առած են բռնու զօրութեամբ յիշ-
եալ տեղերը զրաւելու : Այս գործն
յաջողութեամբ վերջացնելէ ետեւ Գա-
րատաղցիք Բոսնիոյ պիտի հաւաք-
ուին ազգային մեծ հանգէս մը կա-
տարելու համար, ի ներկայութեան
իշխանին : Ահաւաստիկ երկու խնդիր-
ներ, Պէրլինի դաշնագրէն բղխած,
որք առկա կը մնան, և Արևելեան
փոքր պատերազմի մը կայծն արծար-
ծել կ'սպառնան : Եթէ Գարատաղ-
ցիք բռնու զօրութիւն գործածեն և
Ապանիացիք զիմադրեն, պատերազ-
մին անհրաժեշտ է. բայց ի՞նչ պիտի
լինի ասոր հետեւեալը. ո՞ր կողմը
կաղթական պիտի ելնէ. — առ այժմ
յարթելու երկու կողմն հաւասարապէս
իրենց զօրութեան վրայ վստահու-
թիւն կը յայտնեն : Իրողութիւնն այս
է որ Գարատաղի և Յունաստանի սահ-
մանաց խնդիրները մութ ամպեր են՝
որք հորիզոնին վրայ կախուելով նոր
փոթորիկ մը հաւանական կը ցուցնեն :
Միթէ կարելի պիտի լինի՞ ասոր ա-
ռաջքն առնուլ և ի՞նչ միջոցաւ. —
այս ալ գիտարինէ նախատեսել՝ քա-
նի որ գործը բոլորովին Բ. Դրան ձեռ-
քը չէ : Ապանիացիք զիմադրելով չպիտի

ընեն, հետեւեալը կ'ընեն վստահ-
ներով լի է և կրնայ չփոթել թեանց
առիթ տալ :
Այս միջոցին Բ. Դրան, անշուշտ
քաղաքական խնդիրներէ ձանձրա-
ցած, երմտական խնդրոյն վրայ կ'ըզ-
բաղի, և երկու չարթի օրը նախա-
բարաց խորհուրդը նորէն աբտաքոյ
կարգի նիստ մ'ըրաւ պարտուց մի-
այման խնդրոյն վրայ խորհելու հա-
մար : Ելումտից նախորդ նախարարն
անցեալ Պայրամիւն մօտ փոքր փոխա-
ռութիւն մ'ըրած էր Օսմանեան Պաշ-
քայէն, 410,000 ոսկիի անուանական
դուստր մը, յորմէ միայն 230,000 ոսկի
հասած էր կայսերական դանձը, մի
մասն ստիպողական պարտուց և
Պայրամի ստեղծիւ պաշտօնատարաց
թոշակի թերհաշիւ վճարելու յատ-
կանալով, միւս մասով ալ Բէտիքի
զօրաց շատն իրենց երկիրը պիտի
ձանձուէին՝ ըստ պայմանագրութեան
Պանքային : Արդ այս ստակն սպա-
ռելով, նախարարը նոր փոխառու-
թեան մը ձեռնարկած էր, որոյ հա-
մար գիտաւորապէս երկու ծրագիր
կար, մին Գաղղիոյ դեռպանին կող-
մէ պաշտպանեալ, իսկ միւսը նախա-
բարին կողմէ պատրաստեալ : Երկու
ծրագրաց ալ հիմը մաքսերու եկաւ-
մուտներն էին, այս տարբերութեամբ,
որ առաջինը գանձելու եւրոպական
փարչութեան ներքեւ կ'ընէր, իսկ
երկրորդը մաքսերը վարձակալու-
թեան տալու սկզբան վրայ յեցեալ
էր : Բայց դեռպանատուներէն ո-
մանք այս մասին դիտողութիւն ըրին
առարկելով թէ մաքսերն 1858ի 1862ի
և 1877ի փոխառութեանց երաշխա-
ւորութիւն տրուած են, և թէպէտ
ստիպողական պարտագայից համար
տեղութիւնը դիտողութիւն ըրած
չէին որ կառավարութիւնն ուղղակի
ինք գանձէ և գործածէ մաքսերուն
եկամուտները, սակայն չ'էին կրնար
թողուլ որ ուրիշ փոխառութեան մը
երաշխաւորութիւն տրուելով վարձա-
կալաց յանձնուին : Հետեւեալը ա-
ռաջին ծրագիրն՝ օտար փարչութիւն
մտնելուն համար՝ Բ. Դրան կողմէ
չընդունուեցաւ : Երկրորդն ալ դեռ
պանատանց դիտողութեան պատճա-
ռաւ չ'յաջողեցաւ : Նախարարական
փոփոխութեանէն ետեւ բնականաբար
այս երկու ծրագրերը մէկ կողմ դըր-
ուեցան : Ներքին գործոց նոր նա-
խարար Բարձր. Մահմետ Նէտիմ
փաշան՝ նախարարաց խորհրդին մէջ
բանախօսութիւն մ'ընելով՝ փոքր փո-
խառութեանց գրութիւնը գտտա-
պարտեց : Այժմ՝ կառավարութիւն
նըն երմտական խնդիրն աւելի բարձ-
րէն և ընդհանուր կերպիւ բռնելով
պարտուց միայման գործը ձեռք ա-
ռած կ'երկր, և կ'ընուի թէ առ ա-
ռաւելն հարկերին մէկ կամ մէկ ու

կէս տոկոս պիտի յատկացնէ : Բայց
հոս դարձեալ ապահովութեան և
եւրոպական հսկողութեան խնդիրը
կը ներկայանայ, զոր վեհաժողովն
ընդունած է : Յուսարի է որ եթէ Բ.
Դրան լուրջ և իրական ապահովու-
թիւններ տալով այս խնդիրը լուծէ,
օտար միջամտութեան հարկ չ'ընար
լուծուի :
Մայրաքաղաքին Մօնիթօր Տիւ-
թօմէրս լրագիրը վառայ չընկալնե-
րը Գորդաց գործած հարստահարու-
թիւնները վառէն վերջերս եկած
նամակներէ քաղելով պատմելէ ետեւ,
կը յիշէ նաեւ թէ իտալացի ոմանք հիւ-
պատոսաց զալէն զայրացած են և
զէշ սպառնալիքներ կ'ընեն, և այս
առթիւ Կ. Պօլսէն հոկտ. 13 թուա-
կանաւ Բէլ-Մէլ կաղէթ Սնդղիական
լրագրին գրուած նամակէ մը հա-
ւած մը յառաջ կը բերէ :
Բէլ-Մէլ կաղէթի թղթակիցը Թուրք
բարեկամի մը հետ ունեցած մէկ տե-
սակցութիւնը կը յիշէ, յորում՝ այս
վերջինն այսպէս խօսեր է. — «Կըլու-
սամ որ Բեռլինի կոտորածին հեղի-
նակներուն շուտով և խտիւ պատիժ
կուտաք : Մեզ համար դէշ կը լինի
եթէ այդպիսի եղեւնական օրինակ
մ'անպատիժ մնայ : Արիական բնու-
թեան մէջ վայրենութիւն մը կայ, զոր
ի հաշիւ պէտք է առնուլ : Դուք վեր-
ջերս շատ մը հիւպատոսներ զրկեցիք
այնպիսի տեղեր, ուր ժողովուրդը
ճիշդ Աֆղանստանայ ժողովրդեան
չափ վայրենի է : Այդ կոտորածին
համբաւը դուրսերն ընդարձակա-
պէս տարածեցաւ, և կը տեսնէք որ
մինչև անգամ մեր լրագրաց մէջ
դուստրութեան զգացում մը կայ, զոր
Թուրք խմբագիրք չեն կարող ծած-
կել : Կը յիշէք թէ ինչպիսի չնչին պատ-
ճառի մը համար երկու եւրոպական
հիւպատոսներ սպաննուեցան մեր ա-
մենէն աւելի կրթեալ քաղաքացի միւրն
մէջ, ի Սէլանիկ : Ուստի, կըսեմ ձեզ
թէ Աֆղանստանայ մէջ խիստ օրինակ
մը պէտք է տաք, տալա թէ ոչ՝ ձեր
փոքր-Ասիոյ հիւպատոսներէն մի քա-
նին կորսնցնելու կրնաք սպառնալ : »
Հաւանական է որ այս Թուրքին
յիշած խիստ օրինակն Անդղիացիք
Աֆղանստանայ մէջ տան : Արդէն ե-
րէկ հեռագիր մը կը ծանուցանէր թէ
Ռօպէրթս զօրավարն հինգ բարձրագ-
ւորման Աֆղան կախիլ տուեր է, և թէ
պէտ սեպտ. 3ի վատ յարձակումն ը-
նող Աֆղանաց շատերն արդէն փա-
խած են, կարելի է որ դուռն մէկ մա-
սըն իրենց արժանաւոր պատիժն ըն-
դունին, և այսպէս իրենց ետին հօր
պաշտպան ունեցող եւրոպացաց վրայ
այդպիսի յարձակումներ ընելու տը-
րամադիր դատուող «Արիացի վայրե-
նիներուն» կրնայ լաւ օրինակ մը տըր-
իլ, Բայց ի՞նչ պէտք է ընել Թուրք

քիոյ բնիկ ժողովրդեան համար, որոյ
պաշտպան երկրին օրէնքն է միայն :
և որ սակայն եւրոպացիներէն յան-
հունաւ աւելի ենթակայ է այդպիսի
յարձակմանց : Ինչ ընելու է Մօնիթօր
Տիւթօմէրսի յիշած խնդհ հայ դիւ-
ղացուց համար, որք ամեն օր կը կրեն
ամեն տեսակ հարստահարութիւն-
ներ : Եթէ պատիժն եղեւնագործին
ձեռքը կասեցնելու փրկարար զօրու-
թիւնն ունի, ինչպէս ոչ ոք կը ժըխ-
տէ, ինչո՞ւ պատիժ չառլ նոյն իսկ
երկրին ժողովրդեան վրայ ոճիր դոր-
ժողներուն : Գայթակցեցուցի տե-
սարան մը չէ՞ երբ եւրոպացուց վը-
րայ ի դորժ գրուած ամեն ոճիրնե-
րու և թշնամանաց հեղինակներն
անմիջական պատիժ ընդունին, իսկ
երկրին ժողովուրդն հարստահարողը
միշտ աղատ մնալ պատժէ : Հայաս-
տանի մէջ մինչև ցարդ ֆիւրդերն ու
Թուրքերը շատ Հայ սպաննեցին :
Բայց ե՞րբ լսուեցաւ թէ Հայաստանի
մէջ ֆիւրդ մը կամ Թուրք մը կախա-
ղան հանուած է, կամ գոնէ քանի
մը տարի շարունակ բանտ դրուած
է : Ուստի կըսեմ, զարմանալի լինիլ
երբ սպանութեանց և ամեն տեսակ
բռնութեանց օր քան զօր սարսա-
փելի կերպիւ շատնալ տեսնեմք Հա-
յաստանի դաւառացի մէջ : Արդ՝ երբ
ամեն կողմէ կըլսեմք թէ բարենորոգ
մանց համար Գրամի պէտք կայ, ա-
ւելորդ չլինի յիշեցնել թէ այսպիսի
աչքի զարնող զեղծումները բառնայն
ոչ թէ դրամի՝ այլ յօժարակամութեան
կարօտ է, և թէ այժմ աւելի քան եր-
բէք հարկ է այդ յօժարակամու-
թիւնն արդեւամը ցուցնել :

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտոն 27 հոկտ.
Արիացի այս իրիկուն եկած հեռա-
գիր մը կը ծանուցանէ թէ Անդղիական
զօրքը Դանտահարէն Քեռապիլ տանող ճա-
րուն վրայ Խէլաթ-Լու-Լիզա ըստած քա-
ղաքը բանակեալ մը կազմեր են, և մեծ
քանակութեամբ պաշար և ռազմավորք
զիւրեր են անդ : Այս իրողութիւնը կը
հաստատէ թէ Անդղիացիք ձմեռն հոն
պիտի անցունեն :
Նոյն հեռագիրը կը ծանուցանէ թէ
կիրճերուն մօտը դանտաղ ցեղերուն մէջ
յուզումը կը շարունակէ և մինչև անգամ
ուրիշ ցեղերու մէջ կը տարածի :
Աֆղանստան դանտաղ Անդղիական
զօրաց հազարակցութեանց զմերուն ընդ-
հատումն արգիլելու համար միջոցներ
ձեռք տանուեցան :
Լոնտոն 28 հոկտ.
Այս առաւօտ Արիացի եկած հե-
ռագիր մը կը ծանուցանէ թէ Ռօպէրթս
զօրավարը Եւրօպա—Ալքատանը պաշարող
Մանիպպա թիւր տան հազար կը հաւու-
ն : Զօրավարն որոնց որ Անդղիական զօրքը
Եւրօպա—Ալքատանը թաղուն և Քեռապիլ
զան :

Քոչիտանի երեւելի զուգորդին հա-
րիւրի շափ տնտէրը Ռոսիայի զօրավարին
ներկայանալով բարեկամութիւն խոստա-
ցան Անդրիւն :

Լոնտոն 28 հոկտ.
Հորնտրի ծովափնային հրամանատարու-
թեան ներքեւ գտնուող Անդրիւնային նաւ-
աւանդին հրաման եղաւ որ նոյն Յին (յաւ-
առջիկայ շարժու) Թուրքական ծովերը
վերադառնայ :

Լոնտոն 27 հոկտ.
Ալեքանդրոս իւր այս իրիկուան թը-
ւայն մէջ Վիկտորիայի եկած հետադիւր մը
կը հրամանարկէ ծանուցանել թէ Սեր-
պիւնի և Գարաւաղի միջև պաշտպանուող
կան և յարձակողական գաշնակցութիւն
մը կը կնքուած է մոտերս . յիշեալ լրագիրը
կը հաւատարմէ թէ այս պաշտպանութիւնն
Աւստրալիացի Նոթի-Պաղար մոտերէն ի
վեր պատրաստուած էր , և այժմ գոր-
ծողութիւն գտած է Ալպանիացի ըս-
պառնական ընթացից պատճառաւ :

Լոնտոն 28 հոկտ.
Ալ հաւատարմէ թէ Լոնտոնի Ռուսա-
կան զեապան Շաւարտի կոման հրամա-
րական տուած է :

Վիկտոր 28 հոկտ.
Պարտաւորութիւններուց և Ալպանի-
ացի միջև կոմա մը տեղի ունեցած լի-
նեղուն նկատմամբ Վիկտորի լրագրաց
երկէ հրամանարկած լուրը սուտ կը հան-
ուի : Պաշտպանուող կը հաւատարմութիւն
Պէրլինի գաշնակցին համեմատ Գարա-
ւաղիցի գրաւումը գերադասելու մասին
Բ. Գրանտ տուած ազատութեանց վրայ
Գարաւաղի իշխանին իւր զօրաց տուած
յաւաճապանութեան հրամանն ետ ա-
ռեր է :

Բելլիս 27 հոկտ.
Քիչիթէր Լոյս լրագիրն իւր այս իրիկ-
ուան թուայն մէջ Պարսի տը Հայմէրի
պաշտպանի անցնելուն վրայ հաւանականա-
բար տեղի ունենալից գիւտակցութեան
վաւերութեանց վրայ խօսելով կըսէ թէ
Կ Պարսի Աւստրալիական զեապան Զիւրի
կոման հրամանարկական տուած է :

Այս գրաւումը քանի մ'անգամ ալ ըս-
ուեցաւ , բայց այս անգամ ստոյգ լինիլ
կը թուի :

Պէրլին 28 հոկտ.
Փարիզի և Լոնտոնի Գերմանական
զեապաններուն (Հոֆէնբերգի իշխանին և
Միլենթիլի կոման) և Պիլմարք իշխանին
օրդի Հէրպիթ Ծան Պիլմարք կոման մի-
ջև խորհուրդ մը տեղի պիտի ունենայ
ի Պէրլին :

Այս անգամ հասնի հետաքրքր-
Լոնտոն 28 հոկտ.
Պիլմարքի կը հետադիւր թէ բազում
Ալպանիացիներ չեն ուզեր հետադիւր
և կը շարունակեն յարձակումներ ընել
Անդրիւնացի վրայ , որը անոնց վրայ զօր
զրկելու կը պատրաստուին :

Մարտի 28 հոկտ.
Միւրիւրի գաւառին ողորմանց միջո-
ցին երեք հազար հոգի անյայտ եղան :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Վեհ. Սուլթանն իւր թիկնապահ-
ներէն երկու հոգի զրկեց Պրուսա ,
որպէս զի անդ գտնուող գաղթական-
նաց միջակը քննելով տեղեկագիր
մը չինէն :

Նախորդ նախարարութիւնն , ինչ-
պէս ժամանակին ծանուցինք , դատա-
կան ատենից առջև Գաղղիներէն ընդ-
ուին թէ գրութեանց և թէ վատ-
տաբանութեանց մէջ գործածութիւն-
նը խախտ արգիւրած էր : Արդի նա-
խարարութիւնն , իւր առաջին նիստե-
րէն միայն մէջ , Գաղղիներէն այս գոր-
ծածութիւնը վերահաստատեց , որով
հետեւ աստիճանաբար միայն կարելի
էր ջնջել զայն : Այս առթիւ դատա-
կան նորնախարար գիտել տը-
ւաւ թէ Գաղղիներէն ընդուն Բ. Գու-
ռը կէս պաշտօնական ընդուն մ'է , և
թէ Օսմանեան կառավարութիւնն
ստար կրկիններ զանուագ իւր գեա-

պանաց հետ անգամ այդ ընդուն հա-
ղորդակցութիւն կընէ :

Մայրաքաղաքին Գերմանական
զեապան Հաճիֆէլու կոման իւր կա-
ռավարութիւնէն հրամարկատապա-
րաց յայտնի չէ թէ երբ պիտի մեկնի
մայրաքաղաքէն : Գիւտակցութեան
ակիւնց մէջ պարտած զրոյց մը կըսէ
թէ անհաւանական չէ որ Հաճիֆէլու
կոման վախճանեալ Պ. Տը Պիլմարքի
յաջորդէ իւրեւ դեր-նախարար ար-
տաքին գործոյ : Տէյլի Նիւզ լրագ-
րին Պէրլինի թղթակցը կըսէր թէ
Պ. Տը Պիլմարք Գերմանիայ մէջ երկ-
րորդ գիւտակցութեան էր (առաջինը
Պիլմարք իշխանն) , յորմէ կը հե-
տեւի որ , եթէ վերայիշեալ զրոյցն
ստոյգ է , մայրաքաղաքին Գերմա-
նական գեապան ալ իւր երկրին եր-
րորդ գիւտակցութեան է :

Պ. Մէլէթ , որ սըր Հ. Լէյքըրտի
Սուրիա ուղեւորութեան ժամանակ
մայրաքաղաքին մէջ փոխանորդու-
թիւն ըրած էր անոր , քանի մ'օրէն
Գաճիթէ պիտի երթայ , և իւրեւ Անդ-
րիւնային ընդհանուր հիւպատոս և
քաղաքական գործակալապիւր իւր
նոր պաշտօնը վարել պիտի սկսի :

Տրապիզոնի կառավար Սէրքի վա-
շան քանի մ'օրէն ի վեր նահանգին
այլեայլ կողմերը քննութեան պը-
տոյսներ կընէ , և իւրաքանչիւր Սան-
ճագի և Գաղղի պիտայքը կը հա-
կընայ : Սէրքի վաշան կրնայ օրե-
նակ լինիլ Օսմանեան Ափայ միւս կու-
սակալաց , որք' մինչդեռ նահանգին
ամեն կողմն իրենց աշտուրջ քննու-
թեան ու հսկողութեան պէտք կայ
կը կարծեն թէ իրենց կառավարած
նահանգը մի միայն իրենց նստած
քաղաքն է :

Սէփաթուրդի առաջին ռաբաի-
ծութեան (1854 , հոկտ. 20) 25րդ
տարեդարձին առթիւ , Ռուսիոյ կայս-
րը Կոմի տիպարը տուաւ թօթլէ-
պէն զօրավարին , որ' ինչպէս Մասի-
սի ընթերցողները կը յիշեն' մեծ դեր
խաղացած է իրմեւ պատերազմին ժա-
նակ , և մասնաւորապէս Սէփաթ-
ութեան ռաբաիծութեան միջոցին :

Կիրակի օրը Քանսիլիլի մէջ բա-
ւական ծանր անկարգութիւնք տե-
ղի ունեցան , զորս հետեւեալ կերպիւ
կը պատմէ Մոնթիթօր Տիւ Բոմբըս :
Գիւղին բոլոր Գրիտանիայ հաս-
տակութիւնն' Հայ , Յոյն և Հռոմէա-
կան , գիւղին մէջ գերեզմանատուն
մ'ունին , Այս գերեզմանատան տե-
ղը յարմար չլինելով , գարշահատու-
թիւնը գիւղին մէջ կը տարածուէր ,
յորմէ գիւղին բնակչաց մէկ մասը
գանդապաններ ըրած էին ձեռնհաս
իշխանութեան , և վերջերս Բ. Գըր-
նէն որպէս մտրուած էր որ յիշեալ
գերեզմանատունը փակի , և գիւղին
Գրիտանիայ հաստակութիւնը ջնջ-
կէլ քէյի կողմն ուրիշ գերեզմանա-
տուն մը թողնի իրենց մեռելները :
Կ'երեւի թէ այս անօրէնութիւնն
ընդհանուր հաւանութիւն չէ գը-
տեր , մանաւանդ թէ նոր գերեզմա-
նատունը գիւղէն շատ հեռի էր :
Ուրաթ օրը Յոյն տղէկ մը կը մեռ-
նի , և գիւղին Յոյն և Հայ Սուլթան-
ները կը խնդրեն կառավարութեան
որ գոնէ այս անգամ ալ մեռելն
հին գերեզմանատան մէջ թաղելու
արտօնութիւն արուի իրենց : Այս
արտօնութիւնը կը զլացուի :

Կիրակի օրը տեղւոյն Յոյն ժող-
վրդեան մեծ մասն , ընդ որս նաեւ

մեր ազգայիններէն ոմանք , Յունաց
եկեղեցիէն մեռելը կառնուն և բըռ-
նի հին գերեզմանատան մէջ թաղել
կուղեն : ռաբիտիսութիւնն որ յիշ-
եալ գերեզմանատունը կը պահէր ,
գէտ' կը դնէ , և ժամանակին զօր-
հատած լինելով , անոնք ալ ռաբիտի-
սութեան կողմէն : Ժողովրդէն քա-
նի մ'անձինք քարեր նետելով եր-
կուղին օր կը վերադառնան Բայց ձեռ-
առնուած միջոցներուն չնորհիւ ան-
կարգութիւնն աւելի ծանր հանգա-
մանք մը չտանուր : Ռաբիտիսութեան
նախարարն և Սէլէմիէի զօրանոցին
հրամանաւորները կը գտնուէին :
Ուստի , ժողովրդը գաղապը գեա-
նին վրայ թաղով կը ցրուի , և հե-
տեւեալ առաւօտուն , ննջեցելոյն ծը-
նողաց հաւանութեամբ , մեռելը
նոր գերեզմանատան մէջ կը թաղ-
ուի : Ռաբիտիսութիւնը վեց մարդ-
ձերբակալեց' իւրեւ գիւտակց յան-
ցաւոր , որոց երկուքը Հայ են :

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

ՀՐԱԽԵՐ

Ա. Ս. Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Ե. Ս. Ս.

Ազգային ժողովը նիստ ունի յա-
ռաջիկայ ուրաթ հոկտ. 19 ի Մայր
Եկեղեցի :

Ստեանը պիտի բացուի ճիշդ ժա-
մը 6 ին և դոյուր 10 ին :

Հրաւիրեալ են երեսփոխան Էֆէն-
սիներն' իրենց ազգայնական պար-
տականութիւնը կատարելու փութալ
1879 հոկտ. 13

Պարբեր Հայոց (Կիւտ Ս. Պարբեր)
Գումարաւոր

Օ Ր Ա. Կ Ա Ր Գ.

1. Խնդիր Սահմանադրութեան վե-
րաքննութեան . — Վիճարանու-
թիւն 'ի վերայ' Նախաձեռնու-
թեան գիւտանի տեղեկագրոյն :

2. Խնդիր Ղալաթիոյ թաղեցւոյ .
— Վիճարանութիւն 'ի վերայ տեղե-
կագրի Մայր գիւտանի :

Ստեանագլխ
Մ. Գ. Մէլէթ

Կը ըսեմք թէ մեր հակահասուն-
եան ազգայիններէն մեծ Ս. Ալեքանդր
և Թ. Եսայեան Էֆէնտիսները կիրակի
օրը Ս. Պատրիարք Հօր անուան տունը
չնորհաւորելու երթալով Ն. Սրբաղ-
նութեան կրտսեղութեանը ներքեւ
մանկու փափաք յայտնեց են , և
Ս. Պատրիարք Հայրն ալ սիրով ըն-
դունէր է :

Թ. Վ. Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Ե. Ս. Ս.

Կարէն 3 հոկտ. 1879

Ալեքի Մատիւ ,

Հոկտ. 3ին Բ. Դրնէն հրաման հաս-
տա. Բոմբըս օր երթան ի վան , թէ
ի Տրապիզոն ձմեռելու հարկ չկայ ըստ
իւրեանց առաջարկութեան , և թէ ի-
րենց ներկայութիւնը օգտակար ան-
շուշտ պիտի լինի Գրգական խրա-
մանց նկատմամբ : Բոմբըսը Բիւր-
դատերը տեղական դատարանաց
յանձնելով պիտի մեկնին , որոնցմէ
կը կարծուի թէ պէյերը պաշտպա-
նութիւն : Գատարանն ըստ արդի օրե-
նաց գանդատուոր Հայերէ և Բիւր-
տերէ դատական ծախի անունով
գրամ' կը պահանջէ . աղքատ դան-
դատուոր չուարած են , իսկ Բոմբ-

սէրք ըսած են զայս , և գէթ չեն ա-
ռարկեր որ դատարան նախաքննու-
թիւններն ու երապակցութիւններն
ընդ նախադատութեամբ իւրեանց
կարգեալ նախաքննիչ յանձնաժող-
վոյ մէջ տեսնուած լինելուն , հարկ
չկայ այլ ևս երկար բարակ դրաղըն-
և գրամ' պահանջելու : Պէյերն ալ
այդ դատարանաց մէջ նախաքննիչ
յանձնաժողովէն կարգեալ վատա-
բանին ներկայութիւնն ընդունելու
կը գիտարկն , զի քաջ գիտեն որ
եթէ ըստ օրինի և ոչ ի հաճոյս վըճ-
ուուի , պիտի դատապարտուին . . .
Ինչ և կ'ընէ , այս մասին գործեալ կը
գրեմք Զեյ :

Սպիրտ Գայմագամն ու կաշտա-
տու եղբայրն երեքական տարի բան-
տարկութեան դատապարտեցան :

Աշխաթլի մօտ Թուրք մը , իսկ
Կարնոյ մօտ Հայ մը սպաննուեցան ,
կատկածելի անձեր ձերբակալուելու
վրայ են :

Գերմանի կէօքդաշ գիւղի առե-
ւանդեալ երկու աղջիկներն երէկ
յանկարծ ի Կարնի կառավարութեան
եկան , դատարանին մէջ հարցաքնն-
նուելով թէ և կամովն իսլամութիւն
խոստովանեցան , բայց կառավարու-
թիւնն առեւանդիկներուն անունե-
րն իրենցմէ պահանջուուն և չըսե-
նուն վրայ' Թուրք Միթարի մը յանձ-
նեց , որ առ ժամանակ մը պահէ :
Այսօր աղջկանց միւսն մայրը Գերմա-
նէն դալով պիտի հարցաքննուի , և
պիտի յայտնէ առեւանդիկներուն
անունները , յորս կան եղբր գիւղին
Մօլլան ու Միթարը : Այս մասին ևս
Զեյ կը գրուի : Այս հէգ կնիան ա-
մուսնը հերոս միւսնոյն Թուրքերէն
կապանուի , այս տարի ալ աղջիկը կ'ա-
ռեւանդուի : Նայինք այս հոշակաւոր
դասն ս'ը պիտի յանդի . . .

Ժամատարնայի կազմակերպութեան
համար Կ. Պօլէն գալիք գնդապե-
տաց կապաւոր , որոց Տրապիզոն
համակցուն լուրն հասաւ այսր , Հայք
կարեւորութիւն չեն տար և չեն յայտ-
նեւ , յօժարամտութիւն : Նայինք ա-
րա երբ դան ինչ կերպով պիտի կազ-
մակերպին :

Անդրիւն հիւպատոսն երէկ Վա-
րիկն գնալով իւր զարմանքը յայտ-
նեց առեւանդեալ աղջիկներուն Թուր-
քի մը տուն յանձնուելուն վրայ ,
դիտելով թէ գիւղացի իսլամացի վա-
խուցած հրապուրած կամ սպառ-
նացած Հայ աղջիկներ քաղաքացի
իսլամի կը յանձնուին , որ սա ևս իւր
կողմէն հրապուրէ , թեւադրէ , ըս-
պառնայ , մինչև որ իսլամութեան
մէջ հաստատէ :

Վալին Գեր. Առաջնորդ Սրբաղա-
նին ի գիւղօրէն մեկնած լինելուն ու
այս մասին Հայ աղջիկն իրմէն չա-
հանջելու առարկելով' ինքզինք ար-
դարացիւ ճգնած է : Առաջնորդ
որդականին գալուտեան կապաւոր
այժմ' իսկ Գեր. Վահան վարդապետ
քանի մը օրէն աստի պիտի մեկնի , և
հեռադրաւ Ս. Պատրիարք Հօր կամ-
քը հարցուց : ՀՍԿ

Կարս 6 սեպտ. 1879

. . . Խաղաղութեան Տէր .
Տահալեան երեք տարի է որ Ղաբս
Ռուսաց ձեռքն անցաւ , բայց այսօր Կա-
մաղարեան քաղաքաց նման փորձեր կը
փորձուին , այն փորձերը որ միշտ տեղի
կունենան Ռուսաստանի մէջ միայն , և
այսպիսի մէկ փորձ ոչ մի իշխանութիւն
կամ տէրութիւն փորձած է իւր ժող-
վուրդին վրայ , վասն զի բոլորովն բար-
յական բարբարոսութեան կը վերաբերի :
Փաղաքիս Ս. Լուսաւորչեան վարժա-

բանն, որ Ռուսաց հիւանդանոց էր, սա-
րիչն աւելի էր որ բացուած էր. բայց
ինչպէս կարող եմ հաւատարմութեան
ցողաց որ կարող էայ հասարակութեան
օրական պարէնի կիսովն բարեկարգե-
ցաւ. սակայն զգալի էր իրական սեռին
դատարարութիւնը:

Ուստի տնցեալ կիւրակէ Գեր. Առաջնորդն
ուղեց օրնորդաց վարժարանն բանալ,
յանուն Շուշանիկին. բայց կարող նա-
հանգապետն յայտարարեց որ հանդուց-
եալ Լազարէֆի գէնէրակի հոգեհանգիստը
կատարէ Հայոց եկեղեցին. սակայն զըզ-
րոյն բացման հրաւիրողները զրկուած
լինելով՝ հասարակութեան աչքը կիւրա-
կէն կ'սպասէր, որպէս զի տեւեայ այն
պարտէզը, ուրիշց պատուական և բա-
նական ծառեր սխալ պաշարեալներ:

Յիշեալ օրը զինի աւարտման Ս. Պա-
տարարի կատարուեցաւ հոգեհանգիստը,
ի ներկայութեան նահանգապետ գէնէ-
րակ Պրոսկորի. և ապա հանդիսաւոր
կերպով հրաւիրուեցան ի վարժարան,
ուրտեղ երգեցողութենէ գինի, ճառա-
խօսեց հիւանդանոցի բժիշկ և տե-
սուց վարժարանին Պ. Աղէքսանդր Ղա-
զարեանց Ախլայանցի, որոյ աւարտմանէն
զինի Նահանգապետն կիրքով ելաւ և
զնայց ճշտաբանութիւններն աւարտե-
ցան և հանգէսն վերջացաւ ըստ Եւրոպ.
ժամ 12ին:

Հետեւեալ օրը օրհորդներն եկան վար-
ժարան, և սկսուեցաւ դասախօսու-
թիւններն. բայց աւագն որ մինչև կէս
օր հազիւ տեսնէ. յիշեալ պահուն Նա-
հանգապետն ստիկանաց գործակալը
զրկելով կը հրամայէ զոսել զպարտէզը.
4 անգամ ուսուցիչը կը զիմարէ թէ ես
« ձեր խօսքովը վարժարան չեմ մտնիր,
այն ժամանակ կը մտնեմ, երբ Նախ-
կապող հրամայէ » . այսքան զիմարդիչն
զինի Նախկապողը զայով, « Եթէ կը
հրամայէ կը զոսել » կըսէ: Եւ առանց
պատճառք բանալու զոսուեցաւ վար-
ժարանը. (Ըստ երեկոյեան Եւրոպ. ժա-
մը 9ին) Առաջնորդարան ժողով կազմե-
ուեցաւ, խորհրդակցեցան, և « Նախկա-
պող անձամբ Նահանգապետին քով եր-
թայ և պատճառն իմանայ » վճիռ տըր-
ուեցաւ: Լուր զրկուեցաւ Նահանգա-
պետին, իսկ նա բոլորովին մերժեց. « Ժա-
մանակ չունիմ » ըսելով: Վերջապէս Գեր.
Առաջնորդ. եղբակցութեան երկուքով բաւա-
կանին յանդիմանութիւններ լսելէն զինի
կոտէ թէ « այս քաղաքիս մէջ կան ուրիշ
մասնաւոր զպարտէզ, ինչ զարմանք է
որ անոնք բաց են, իսկ այն վարժա-
րանն կը զոսել, որն որ կախովիստի
երկու կողմով և մէկ հրահանգով բա-
յած եմ »: Կոտանայ պատասխան թէ
« այն զպարտէզներն վրայ բնաւ ուղղ-
բութիւն չունին, որովհետեւ զիտեմ որ
անբարեկարգ են »: Ընթերցողք կարող
են մակարեւել, որ օր մը չէ օր մը բա-
րեկարգեալ զպարտէզը պէտք է դր-
ւին Ռուսաստանի մէջ, քանի որ փորձեր
կըլնան միւս:

Նոյն զիւրերն Եւրոպացեաց ժամը 11ին
հեռագիրներ զարեւուեցան թէ՛ կաթողի-
կոսին և թէ՛ թեմական տեսուչ Պ. Պերճ
Պապեանցի և Պորճի խառնակի Պ. Ար-
քար Յովհաննէսեանի, որմէ եկաւ պա-
տասխան, բայց իջմիծնէն զեւ ևս
պատասխան չէ եկած. որովհետեւ այս
գործէն պիտանին և հարկաւոր գործ ու-
նի Սինոդն և միտարեւութիւնը. տոմար-
ներ կը ժապաւինէ որ եկամուտ հաւա-
քէ:

Հայ հասարակութիւնը մտաւանձու-
թեան մէջ է. ոչ ծախսուածներու գին զնոյ
կայ և ոչ ալ հարց ևս փորձ ընող կայ.
Հայը կը ծեծուի Ռուսէն, կրկին յանցա-
ւորը Հայն է: Հայու տուն զող մանա-
լով 2870 մանկի (200 տակի) արժէքով
արժաթեղներն կ'ստան, ապանաւես
միայնէր հինգ անգամ կը վրայեն, բայց
երեք չորս ամիս է որ զործը երկու վրայ
մնացած է. զի զպը Պարսիկ է, զատա-
րանի նախագահն ալ Պարսիկ. կարելի՞
է որ իւր կրօնակիցն արդարութեամբ
դատաւարուի:

Երէկ քաղաքիս Հայ բողոքականաց
գրաստներ կիւրակեցաւ Նահանգապետի
ձեռամբ. տեսնեմք սպ զփորձը մեր վրայ

ալ պիտի փորձուի. տեսնեմք թէ ինչ
միտման Սինոդն ինչ ընթացք պիտի բը-
նէ. այս տղային և հոգեւոր գործոյն
կ'սպասեմք.

22 մարտի 28 սեպտ. 1879.

Սիրելի Խմբագրապետ,

Պատուական Մատիւր. 2424 թը-
ւով 26ր Մեծ-Նամակադրին հետ ի մի-
տին բացատրութիւն կը պահան-
ջէք մեզմէն մի քանի համար, զոր
Նամակադրին՝ 2-ր, իսկ Գեւ. 2-ր
ձեռքէ կ'անուանէք:

Այդ ուխտն 2-ր է. քանի որ դու
յու թիւն առաջած է այն օրէն, երբ
Ամենապատու Ներսէս Ս. Պատրիար-
քն ուխտ կատարած է, ի շարս Ս.
ԼՅմիածնի եղբակցութեան տնցիւնը
համար, և նոյն օրէն ի վեր ամեն ե-
ղբակցութեան (որոյ թիւն բաւա-
կան շատ է) ստորագրած են զայն և
սպա եղբակցութեանց:

Այդ ուխտն 2-ր է. քանի որ դու
յու արդէն ի Ս. ԼՅմիածնի նորոգ տը-
պագրութեան Եղբակցութեան 2-ր
նագրութեան Մաշտոցին մէջ անցած
է, և ինչ տեսութեամբ որ Կ. Պօլսոյ
Երեմիոսեանութիւնն ու Աղդ. վար-
չութիւնն մինչև ցարդ նայած են
Սոյ կաթողիկոսութեան վերայ, նոյն
գրութեամբ նայուած է և իշխալ
Ռախադրին մէջ. Լուսեցաւ թէ Ռա-
սաստանի լրագիրք հրատարակած են
նոյն Ռախադրին, եթէ կամիք, կա-
րող էք վերահրատարակել նաև Մա-
սիսի միջոցաւ, որպէս զի ընթերցողք
չօշակեն մեր գրածին ստորագրու-
թիւնն:

Արդ՝ ի զուր յոգնած է ուրեմն
26ր Նամակադրին բացատրութիւն
պահանջել մեզմէն. քանի խնդիրն
ինքնին բացայայտ է արդէն: Իսկ
եթէ կամիք մեղադրել զմեզ՝ թէ ին-
չո՞ւ ստորագրած եմք նոյն Ռախա-
դրին, այդ պաշտօնն իրեն չլերա-
բերել, այլ Աղդային վարչութեան
և յաւան Երեմիոսեանութեան, որ
եթէ կարեւոր դատի երբ և ինչ խն-
դիր յուղել և քննադատել զմեզ * ,
յայտնում և մեք չեմք գանդալի
պատասխանել ինչ որ արժանի է, թէ՛
զմեզ պաշտպանելու և թէ՛ ճշմար-
տութեանն ծառայելու համար, որ
մեր պարտաւորութեանց ամենէն
քաղցրագոյնն է:

Ընդունեցէք. . . Խմբագրապետ
յարգանաց հաւատին, որով մնամ
Մ. Ե. Մարտիան

Ահաւաստի Գեր. Միքայիլեղեկ
Սրբազանի իշխած ուխտողին պատ-
ճէնքն, որ ԼՅմիածնի տաղարուած
նոր Մաշտոցն քաղուած է:

« Բանտն Ամենասուրբ Երրորդու-
թեան Հօր և Որդւոյ և Հօգւոյն
Սրբոյ Երկրպագելի տեղաւ իման
Միածնի Բանին Հօր Տեառն մերոյ
Երեմիոսի փրկատուի, առաջի Աստու-
ծային սեղանայս և Աստուածընկալ
սուրբ Նշանայս, ևս (այս առաջ Էր-
բողոս, այս էլ Գեորգի) ճշմարտու-
թեամբ և ուղղութեամբ խղճի մը-
տացս և սրտիս երդումով գերդուին* »
սուրբ ըստ առաջակալ պայմանաց:

Նախ՝ անխտոր և անայթաք ըն-
թանալ ի վարդապետութիւն հա-
ւատոյ և պատուիրանաց Հայաստան-
եայց Առաքելական սուրբ եկեղեց-
ւոյ, զոր հաստատեաց Աստուած ի
ձեռն սրբոյ Առաքելոյն իւրոյ թա-

* Տակաւին յայտնի չէ թէ՛ ներկայ
Երեմիոսեանութիւնն օրինաւոր կը հա-
մարնայ Ռախադրին, թէ ապօրինաւոր:

* Երդում բաւը բոլորովին անպատեհ
է և Ա. ետարանի պատուէրն բացար-
ձակապէս հակառակ է:

դէտսի և Բարձրագոյնութեան, այլ և ի
գնացս իմ անստերիւր հետեւի վա-
րուց և գործոց հարցն ուղղապատե-
որք փայլեցին իմաստութեամբ և
չնորհօք Հօգւոյն սրբոյ յայդ իս մե-
րս մ' . յիշատակ բարեաց եղեն և
փառ սուրբն արժանապէս յեկեղեց-
ւոյ Հայաստանեայց, ի բացատրու-
թիւն իմաստոյ սրբոյ Աւետարանին
չխտարել երբէք ի շաղկապ նոյս,
և յարարութիւնս ծիսից և պաշ-
տամանց փրկատուական Երեմի վարիլ
միշտ ըստ Մաշտոցին որ սահմանեալ
է ի մերումն եկեղեցւոյ, և ըստ կար-
գացն և կանոնաց՝ որ դրով կամ
աւանդութեամբ յառաջնոց անտի
հարցն հասեալք են առ մեզ: Խոր-
շնելով յօտարարոյն և յեկամուտ նո-
րաձեռութեանց:

Երկրորդ. խոստանում և ուխտում
չլինել երբէք օրինաւորաց կամ տը-
համարհող կարգաց եկեղեցւոյ, այլ
և հանապաղ խրատել զժողովուրդն
յանձնեալս ի խնամ իմ, ուսուցա-
նել և յորդորել զնոսա ի պահպա-
նութիւն Աստուածային և եկեղեցու-
կան օրինաց ի հնազանդութիւն հո-
գւոյ իշխանութեան և առ հասա-
րակ ըստ անհրաժեշտ պարագայ կոչ-
ման իմոյ և ստորձանի, զիտմ իմ և
զխորհուրդս և զգործութիւն մտաց և
ջանից իմոյ ուղղել յօգուտ և ի
փրկութիւն Հօգւոյ ժողովուրդեան ի-
մոյ, այլ և ոչ երբէք վատնել յաւա-
պէտքս զարդիւնս ժողովուրդեան զնո-
ւերեալս յանուն Աստուծոյ և ի նը-
պատա եկեղեցեաց սրբոյ:

Երրորդ. խոստանում և ուխտում
հաւատարմութիւն սրբոյ ԼՅմիածնի
մինչև ցլախճան կենաց իմոյ, և կալ
մնալ հրա հաւատարմութեամբ ի ներ-
քոյ իշխանութեան և հրամանաց
սրբոյ կաթողիկոսի Մայր Աթոռոյ,
յորում ընտրութեամբ Հօգւոյն սը-
րբ անդաւորն յառաքելոյն սրբոյ ի
նախկին լուսաւորաց Հայաստան աշ-
խարհիս և յօրինաւոր յաջորդէնոյն
ի սրբոյն Գրիգորէ Առաքելաշառիլ
հայրապետէ մերմէ, անընդհատ դա-
սաւորութեամբ և ուղիւ յաջորդու-
թեամբ բազմեալ կայ այսօր Տ. Տ.
Գեորգ Գ. վեհապառ և Սրբազնու-
ղոյն* կաթողիկոսն ամենայն Հայոց,
և օրինաւոր յաջորդացն նորին, յոր-
դեղով և կատարելով զամենայն հրա-
մանս որ ի սրբոյ Աթոռոյ ստաի ի
վերայ իմ գնիցն. ոչ երբէք ի կող-
մին երանել այլոցն կաթողիկոսական
անուանեալ անվաւեր աթոռոց, որք
հետեալ կան մինչև ցլախճան ի միայ
միայնոյ երեւելի գլխոյ եկեղեցւոյս
Հայաստանեայց՝ ի Սիւս և յԱղթա-
մար **. այլ մնաւանդ հոգ ի մտի
դնել միշտ ի մի միաբանութիւն ժո-
ղովիլ զհամբոյն սրբիս սրբոյ Լու-
սաւորչին ընդ միով իշխանութեամբ
յաջորդաց սրբոյ Աթոռոյ:

Չորրորդ. խոստանում և ուխտում
կալ և մնալ ցլախճան կենաց իմոյ
անդամ և միաբան սրբոյ Ռախիս,
որ ի վաղարշապատ, և ծառայել
երկիւղիւ Տեառն յօգուտ և ի փա-
ռըս անուան Սրբոյ ԼՅմիածնի, առ-
տար լինելով իմաստն ջանիւք յա-
ռաջագէտ՝ զարգացման և պայծառու-
թեան սրբին յամենայնի:

Հինգերորդ. խոստանում և ուխ-
տում ոչ բնաւ անցանել անդր քան

* Այս փառաբանական անվաններն
ալ խառն անպատեհ են Մաշտոցին մէջ:
Ծ. Խ.

* * Այս խօսքը սխալ է: Աղղը ըն-
դունել հետեալք բառն, որովհետեւ այդ
հետեալք կոչուած (Երկրորդական կամ
մասնաւոր) կաթողիկոսութիւնները փր-
ցնելու կամ Մայր Աթոռին հնազանդե-
ցնելու կարող է:

զոսման իշխանութեան, զոր սա-
յէ ինձ Աստուած ի ձեռնադրութե-
ան իմմէ յեղիստապատութիւն ի վե-
րոյ (այս ինչ վիճակի), ոչ կրիւք կամ
ցանկութեամբ իւրաց աշխարհիս զանց
առնել զկանոնսք եկեղեցւոյ: Գիտու-
թեամբ իմմէ վիճակէ յայլ ինչ վի-
ճակ: ոչ ձեռնադրել աշառութեամբ
կամ՝ կոչաւք ի քահանայութիւն
կամ՝ ի սարկաւադութիւն զողեւած
և զանարժան, այլ ոչ երբէք ձեռ-
նադրել զք. յայլմէ վիճակէ առանց
ինչ քանաց առաջնորդի և ժողովրդ-
եան տեղոյն:

Վեցերորդ. քանի ուխտեալ եմ
մնալ մինչև ցլախճան կենաց իմոյ
առաջնորդ (այս ինչ) վիճակին, յո-
րոյ վերայ հանդերձեալ եմ առնու-
ղձեռնադրութիւն, և ոչ զալն դը-
նել այլում վիճակի, որ արդիւնաւոր
թուիցի կամ բարձրագոյն քան զինն:
Խոստանում զի ի դիպել անանկալ
պատահարաց և հարկելոյ իմոյ հե-
ռանալ ի վիճակէ՝ յորոյ վերայ
ձեռնադրեցայ օծութեամբ և կըն-
քով Սրբոյ Հօգւոյն, գործ արարից
այսրէն առ սոս Սրբոյ Հայրապետին
իմոյ և կայից աստէն միաբանու-
թեամբ յուխտ վանաց Սրբոյ ԼՅ-
միածնի, յոր վաղու ևս միաբանեալ
եմ սրբիս և ըզձիւք ի ձեռնադրու-
թեանս իմում, յերկրութիւն:

Չայտուիլ խոստանում և զոր խոս-
տանում և զոր աւելի ուխտել յաւա-
ռաւոր ձեռնադրութեան իմոյ յառաջիկա
յուրութեան ինեւակ զասակարգու-
թեանց Սրբոյ եկեղեցւոյ և բազմա-
թեան ժողովրդոյ, և թէ կամակար-
մաւք և կամ թերադրութեամբ մը-
տից առ սոս հարկանիցեմ, պար-
տաւոր եղեց առաջի անխոր դա-
տարին Աստուծոյ և առաջի Սրբ-
բազնագոյն Հայրապետին ամենայն
Հայոց Հոգւոյ Տեառն մերոյ, և առ
այս վիայ հաւատարմութեամբ ինձ
զՍրբութիւնս Աստուածային Խորա-
նիս և զսոս ուխտողիւ երդմանս
իմոյ, յորոյ ի հաստատութիւն ըս-
տարագրեմ:

Հարկ չկայ ըսելու թէ այս Ռա-
սագիրը բոլորովին նոր է՝ ներկայ
Ս. կաթողիկոսին օրով սահմանուած,
միապետական փառասէր սեւոյ որ-
դիւնք, որ Հայաստանեայց եկեղեց-
ւոյն սեւոյն և աղղային աւանդու-
թեանց չլինար համաձայնիլ:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Պ Օ Ք Ա Չ Չ Ի Օ

ՏՍՍԵՐԵՒԱ

Առաջ Խորհրդանշան

Հատոր Բ.

Տպագրեալ յԱրմի

Ամեն Հայ գրավաճառաց քով կը
գտնուի: Դին մէկ արծաթ Մէճիւս:

ՎԼԻՔ ՏՍՐՈՆՈՑ

Պատմութիւն Աղէքսանդրի և Սարգիսի
քաջացն Աշխատաց:

Դրեաց Կարգէր Վ. Եւսեբիոս Բաբան
ուրիշ Տարեայ:

Ամեն Հայ գրավաճառաց քով
կը գտնուի: Գին 5 զրշ:

ՃԱՇԱԿ

ՀԱՅ ՄԱՏԵՆՈՂԻՐՈՒԹԵԱՆ

ԾԱՂԱԿԱՐԱՂ, ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵՁՈՒԹԻ

Հանդերձ գրական, պատմական, կեն-
սագրական և այլ ծանօթութեամբ:

Աշխատութեան Պ. Պէպեման

Աղղային ամենէն նշանաւոր հեղի-
նակաց զործերէն քաղելով պատրաս-

